

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅԱՅԼՈՅԱՆ ԱՆՆԱ ՎՈԼՈՂՅԱՅԻ

ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԺԳ.00.03 - «Հատուկ մանկավարժություն» մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գլխական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ն. Ազարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ի. Կ. Կարապետյան

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Հ. Ռ. Սկրտչյան

Առաջատար կազմակերպություն՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան
ծծծպետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ մարտի 13-ին ժամը 14⁰⁰-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի խորհրդում:

Հասցեն՝ 375010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. փետրվարի 13-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի գլխական
քարտուղար՝ մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ

/Ա. Հ. Սվաջյան/

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Մատաղ սերնդի բարոյական դաստիարակության գործընթացի կատարելագործումը միշտ եղել ու մնում է արդիական: Հատուկ ուսուցման և դաստիարակության տեսության մեջ և գործնականում մտավոր հետամնացություն ունեցող երեխաների բարոյական կերպարի ձևավորման ուղիների և միջոցների որոշումն իրականացվում է նրանց անհատական զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրության հետ անմիջական կապի մեջ:

Անդրադառնալով դպրոցահասակ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների անձի զարգացման հիմնախնդրին տարբեր տեսանկյուններից՝ մի խումբ հետազոտողներ (Ն.Լ.Կոլոմինսկի, 1969, 1978, Լ.Ի. Դարգևիչենի 1971, Ի.Գ.Երեմենկո, 1976, Ջ. Ա. Խաչատրյան, 1996, Ա. Յ. Սվաշյան, 2008, Լ. Վ. Պրոնինա, 2009 և այլք) ուշադրություն են դարձնում նրանց բարոյական մի շարք որակների ձևավորման վրա: Հեղինակները նշում են այս երեխաների կողմից բարոյաէթիկական հասկացությունների անբավարար ընկալման, էթիկական բնույթի նույնատիպ կարծրատիպերի առկայության, ճիշտ արժեքային կողմնորոշումների ձևավորման դժվարությունների, վարքագծում բարոյական հասկացությունների իմացության և դրանց իրականացման տարբերության մասին:

Միևնույն ժամանակ, մի շարք հետազոտություններում լավատեսական կարծիքներ են արտահայտում (Ժ. Ի. ՇիՖ, 1965, Մ.Ս.Պևզներ, 1973, Ն.Գ.Մորոզովա, 1977, Ջ. Ա. Խաչատրյան, 1996, Է. Մ. Կաֆյան, 2005 և ուրիշներ) մտավոր հետամնացություն ունեցող երեխաների մեջ որոշակի բարոյական հասկացությունների կազմավորման հնարավորությունների վերաբերյալ: Մի շարք հետազոտողների (Գ.Վ.Կուզնեցովա, 1978, Ն.Ն.Մալոֆեև, 2003, Է. Մ. Կաֆյան, 2005 և այլք) աշխատությունները վկայում են, որ մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցականների շրջապատի հետ ճիշտ փոխհարաբերություններ ձևավորելու և բնավորության դրական գծեր դաստիարակելու համար, անհրաժեշտ է հատուկ շտկողական մանկավարժական հնարքների կիրառումը: Սակայն այս երեխաների բարոյական դաստիարակության, դիմացինին արձագանքելու և փոխադարձ օգնության հիմնախնդիրը փորձարարական հետազոտության առարկա չեն հանդիսացել:

Այդ իսկ պատճառով այս երեխաների փոխօգնության կարողությունների զարգացման ձևերի առանձնահատկությունների ուսումնասիրությունը, դրանց ուղղված համապատասխան միջոցների, մեթոդների մշակումն ու համապատասխան պայմանների ձևավորումը, տվյալ քանակակազմի երեխաների համար դիդակտիկ հանձնարարությունների, վարժությունների, խաղերի բովանդակության կատարելագործումը, ինչպես նաև դրանց անցկացման հատուկ պայմանների ապահովումը կնպաստեն մտավոր հետամնացություն ունեցող նախադպրոցականների գործունեության ակտիվացմանը, միմյանց փոխօգնության հասնելու կարողության և հմտության ձևավորմանը:

Վերոհիշյալ փաստարկները խոսում են հետազոտվող հիմնախնդրի տեսական, գործնական և սոցիալական կարևոր նշանակության մասին, ինչն էլ, ըստ մեզ հաստատում է հետազոտվող խնդրի առարկայի արդիականությունը:

Հիմնահարցի մշակվածության աստիճանը: Մտավոր հետամնաց երեխաների բարոյական դաստիարակության հիմնահարցը միշտ էլ գտնվել է մանկավարժների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Մի շարք գիտնականներ (Ե. Դ. Միկուլինա, 1956, Staub, 1971, Ն. Վ. Տարասենկո, 1980, Morre, 1983, Վ. Գ. Պետրովա, 1998, Ն. Ն. Մալոֆեև, 2001 և ուրիշներ), ինչպես նաև հայ մասնագետներ (Յ. Կ. Աղավելյան, 1990, Զ. Ա. Խաչատրյան, 1996, Թ. Յու. Ազատյան, 2007, Ա. Յ. Սվաջյան, 2008, Ս. Պ. Պողոսյան, 2010 և ուրիշներ) ուսումնասիրել են մտավոր հետամնաց նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների ուսուցման և դաստիարակության բազմակի հարցեր: Այս ամենով հանդերձ այսօր առկա է հիմնախնդրի վերաբերյալ ոչ բավարար մշակվածություն, մասնավորապես ուսումնասիրված չէ մասնագիտացված մանկատներում և ներառական մանկապարտեզներում մտավոր հետամնաց երեխաների փոխօգնության կարողությունների ձևավորման և զարգացման մոտեցումները, որոշված չէ այս հարցերի վերաբերյալ դաստիարակների տեղեկացվածության մակարդակը, մշակված չեն այդ երեխաների ապրումակցման և միմյանց աջակցելու կարողությունների ձևավորման տեսական տեսանկյունները, միջոցները, մեթոդները, մանակավարժական պայմանները: Այս հարցերի լուծումը կնպաստի տվյալ հիմնախնդրի մասնակի լուծմանը:

Չետագոտության օրյեկտը ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների միջև փոխօգնության ձևավորման գործընթացն է:

Չետագոտության առարկան մտավոր հետամնացություն ունեցող ավագ նախադպրոցականների փոխօգնության կարողությունների զարգացմանն ուղղված դաստիարակչական միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմաններն են:

Չետագոտության վարկածը: Այն ենթադրությունն է, որ առաջարկված և փորձարարական ճանապարհով հիմնավորված միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները արդյունավետ կլինեն մտավոր հետամնացություն ունեցող ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեջ կարեկցանքի և փոխօգնության զգացում դաստիարակելու գործընթացում: Ընդ որում՝ ճիշտ է հետևել այս ուղղությամբ առաջադրվող խնդիրների աստիճանական բարդացման սկզբունքին՝ բարոյական նմուշի վերաբերյալ տարրական պատկերացումների ձևավորումից մինչև նրա բովանդակության դրական գծերի հարստացումը, ինչպես նաև մտավոր հետամնաց նախադպրոցականների ճիշտ վարքագծի կայունացումը:

Չետագոտության նպատակն է ուսումնասիրել մտավոր հետամնացություն ունեցող ավագ նախադպրոցական տարիքի երեխաների փոխադարձ օգնության հասնելու առանձնահատկությունների զարգացումը և մշակել դրա կատարելագործման միջոցներն ու մեթոդները

Չետագոտության խնդիրները.

1. ուսումնասիրել մտավոր հետամնաց նախադպրոցականների փոխօգնության դաստիարակության ժամանակակից մոտեցումները,

2. ուսումնասիրել մտավոր հետամնացություն ունեցող ավագ նախադպրոցական տարիքի երեխաների փոխօգնության զարգացման առանձնահատկությունները,

3. մշակել հատուկ վարժություններ, առաջադրանքներ, խաղեր և իրավիճակներ մտավոր հետամնացություն ունեցող ավագ նախադպրոցականների՝ փոխօգնության կարողության դաստիարակության համար և փորձարարական ճանապարհով հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Չետագոտության տեսական և մեթոդոլոգիական հիմքն են կազմել ուսուցման գործընթացի հումանացման հիմնարար գիտական սկզբունքներն ու դրույթները (Ե.Վ.Բոնդարևսկայա, Ա.Վ.Կուլևնիչ, 1999)

անձի ձևավորման և զարգացման գործում գործունեության առաջատար դերի (Ա.Ն.Լեոնտև՝ 1997), հասկացությունների և գործողությունների փուլային ձևավորման (Պ.Յ.Գալպերին՝ 1977), զարգացող ուսուցման (Լ.Ս.Վիգոտսկի՝ 1983), մտավոր հետամնաց երեխաների կրթության և դաստիարակության տեսությունները (Տ.Ս.Վլասովա, Մ.Ս.Պեզներ՝ 1973):

Աշխատանքում հենվել ենք նաև մտավոր հետամնացության կլինիկական-հոգեբանական բնութագրերի վրա (Մ. Ս. Պեզներ, 1959, Մ. Ս. Պեզներ, Վ. Ի. Լուբովսկի 1963, , Լ.Յ. Սարատսկյան, 2004, Թ. Յու. Ազատյան, 2005 և ուրիշներ):

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են ***հետազոտության հետևյալ մեթոդները.***

- գիտամանկավարժական գրականության ուսումնասիրում և տեսական վերլուծություն,
- հետազոտվողների բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն,
- երեխաների փոխօգնության դաստիարակման ուղղությամբ մանկապարտեզների դաստիաակների աշխատանքի մանկավարժների առաջավոր փորձի ուսումնասիրում և ընդհանրացում,
- հետազոտության հոգեբանամանկավարժական մեթոդներ՝ դիտում, հարցում, զրույց, անկետավորում,
- մանկավարժական՝ հաստատող և ձևավորող գիտափորձեր,
- մաթեմատիկական վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը

• Ուսումնասիրվել և վերլուծվել են մասնագիտակցված մանկատան և ներառական մանկապարտեզի պայմաններում մտավոր հետամնացություն ունեցող ավագ նախադպրոցականների փոխօգնության կարողությունների զարգացմանն ուղղված դաստիարակչական աշխատանքների դրվածքը:

• Ընտրվել, մշակվել և համակարգվել են մտավոր հետամնաց նախադպրոցականների փոխօգնության կարողությունների զարգացման միջոցները, մեթոդները և մանկավարժական մոտեցումները:

• Մշակվել և առաջադրվել են պատրաստի, իրական գործնական իրավիճակներ՝ մանկավարժական հնարքներ ու պայմաններ՝ ուղղված մտավոր հետամնաց նախադպրոցականների փոխօգնության պահանջների խթանմանը:

Հետազոտության տեսական նշանակությունը սահմանվում է ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների՝

ապրումակցման և փոխօգնության դրսևորումների, դրանց դաստիարակության նպատակով առաջարկվող հատուկ միջոցների, մեթոդների և դրանց կիրառման պայմանների, ինչպես նաև ստացված արդյունքների տեսական հիմնավորվածությամբ:

Յետազոտության գործնական նշանակությունը հիմնավորվում է մտավոր հետամնաց ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ապրումակցման և փոխօգնության դաստիարակման հատուկ միջոցների, մեթոդների մշակման և գործնական ներդրմամբ, որն էլ հիմք է դառնում նշված երեխաների բարոյական պատկերացումների և արարքների ձևավորման համար: Յետազոտության գործնական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ հետազոտության արդյունքները կարող են կիրառվել մասնագետների կողմից, դասախոսությունների մշակման և գործնական պարապմունքների անցկացման ժամանակ:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

1. Ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների ապրումակցման և փոխօգնության դրսևորումները բնութագրվում են մի շարք առանձնահատկություններով՝ բարոյական կանոնների և նորմերի անբավարար գիտակցմամբ, անբարենպաստ հոգեվիճակի հասակակցին ապրումակցելու անկարողությամբ տարբեր իրավիճակներում, բարոյական նորմերի առանձնացման և գիտակցման, վարքագծի և գործունեության նպատակների փոխհամաձայնեցման անկարողությամբ:

2. Բացահայտվել են մտավոր հետամնաց երեխաների ապրումակցման և փոխօգնության ունակությունների դաստիարակության ներուժը: Դրանց իրականացման համար անհարաժեշտ է նպատակաուղղված ուսուցում: Կրթադաստիարակչական միջոցներն ու մեթոդները պետք է ունենան շտկողական ուղղվածություն՝ հաշվի առնելով առկա խանգարման առանձնահատկությունները:

3. Մշակվել և փորձարարական ճանապարհով հիմնավորվել են մտավոր հետամնաց երեխաների ապրումակցման և փոխօգնության ունակությունների դաստիարակության բովանդակությունը, միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները:

Յետազոտությունն անցկացվել է **երեք** փուլով:

Առաջին փուլում (2003-2004թթ.) իրականացվել է գիտամանկավարժական գրականության ուսումնասիրում, հիմնախնդրի մշակվածության աստիճանի բացահայտում և վերլուծում:

Երկրորդ փուլում (2005-2007թթ.) բացահայտվել և վերլուծվել են մասնագիտացված մանկատանը և ներառական մանկապարտեզում մտավոր հետամնաց երեխաների փոխօգնության կարողությունների ձևավորման և զարգացման աշխատանքների դրվածքը, ուսումնասիրվել է դաստիարակների վերաբերմունքը հիմնախնդրի շուրջ, ձևակերպվել է հետազոտության տեսանկյան մոտեցումներն ու հիմքերը:

Երրորդ փուլում (2007-2008թթ.) վերլուծվել, համակարգվել և ընդհանրացվել են տեսական նյութերը և մանկավարժական գիտափորձի արդյունքները, հիմնավորվել և ձևակերպվել են հետազոտության հիմնական եզրակացությունները, ձևավորվել են ատենախոսությունը և հավելվածը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը ապահովված են կատարված աշխատանքի ծավալով, հետազոտվող երեխաների բավարար քանակագնով, ուսումնասիրության ժամանակակից մեթոդների կիրառմամբ, փորձնական նյութերի վիճակագրական մշակմամբ:

Ատենախոսության հիմնական արդյունքների հավաստիությունը և հիմնավորվածությունը հիմնավորվում են նաև հեղինակի հրապարակումներով, զեկուցումներով, ելույթներով, ստացված տվյալների քննարկումներով և դրանք մանկավարժական գործընթացում ներդնելով:

Աշխատանքի արդյունքների փորձարկումը: Ատենախոսական հետազոտության առանձին դրույթները, արդյունքները և եզրակացությունները զեկուցվել են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստերում (2005-2011 թթ.), Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության, նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոններում (2006-2011թթ.):

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքի 163 էջում: Այն կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսական աշխատանքը պարունակում է 13 աղյուսակ, 13 նկար, 8 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է հիմնախնդրի արդիականությունը, բացահայտված է վերջինիս մշակվածության աստիճանը, որոշված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, ձևակերպված է հետազոտության վարկածը: Ներկայացված են հետազոտության մեթոդները, նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդները, կազմակերպումը և փուլերը» գլխում, ներկայացված է տվյալ հիմնախնդրի լուսաբանվածության աստիճանը՝ հատուկ մանկավարժության և հոգեբանության մեջ, տրված են մտավոր հետամնաց նախադպրոցականների ապրումակցման և փոխօգնության ունակությունների դաստիարակման մոտեցումները, տրված է հետազոտության գաղափարական հիմնավորումը, բացահայտված են վերջինի խնդիրները, մեթոդները և կազմակերպման առանձնահատկություններն ու պայմանները:

Հաստատված է, որ ուսումնասիրվող հիմնահարցը արդիական է, ունի կարևոր, տեսական, գործնական և սոցիալական նշանակություն: Սակայն այն հատուկ մանկավարժության և հոգեբանության մեջ գրեթե ուսումնասիրված չէ: Այս հանգամանքը գործնականում զգալիորեն դժվարեցնում է այդ երեխաների մեջ փոխօգնության պահանջումների և ունակությունների ձևավորման և զարգացման աշխատանքների կազմակերպումը: Հիմնախնդրի նշանակության հիմնավորումն արտահայտվում է սույն ուղղություններով՝

- մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական նորմերի դաստիարակման գործընթացի, մասնավորապես վարվեցողության կանոնների, ապրումակցման և փոխօգնության որակների գործնական ու սոցիալական նշանակության ուսումնասիրություն

- ավագ նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների մեջ գթասրտության, փոխօգնության, ապրումակցման որակների դաստիարակման համար մանկավարժական և մեթոդական մոտեցումների մշակում:

Ներկայացված հետազոտության հիմնական ուղղվածության հիմքում ընկած են վերոհիշյալ ուղղությունները:

Այս գլխում ներկայացված է նաև հետազոտության տեսանկյան հիմնավորումը, մասնակի խնդիրները, աշխատանքի փուլերը: Նշված է, որ տվյալ ուսումնասիրությունն անցկացվել է 2003-2008 թվականներին, Գյումրիի «Երեխաների տուն» մանկատանը և «World Vision Չայաստան» երեխաների զարգացման կենտրոնում: Այդ տարիներին, ընդհանուր առմամբ, հետազոտությանը մասնակցել են 155 ավագ նախադպրոցական տարիքի թեթև և չափավոր աստիճանի մտավոր հետամնաց երեխա՝ 120-ը հաստատող գիտափորձում, 35-ը՝ ձևավորող:

Հետազոտության ընթացքը բնութագրվում է միմյանց հետ փոխկապակցված 3՝ կազմակերպչական, փորձարարական, եզրափակիչ փուլով:

Ատենախոսության երկրորդ՝ «Նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների փոխօգնության և պատրաստականության որակների դրսևորման առանձնահատկությունները» գլխում ներկայացված են մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումների ուսումնասիրության արդյունքները, կոլեկտիվ և անհատական իրավիճակներում վարքի առանձնահատկությունները: Բարոյական պատկերացումներ ներկայացնող նկարների շուրջ տարվող աշխատանքների միջոցով հետազոտվել է մտավոր հետամնաց նախադպրոցականների արժեհամակարգը: Անհատական փորձարարական իրավիճակներում ուսումնասիրվեց մտավոր հետամնաց նախադպրոցականների վարքը: Այս գլխում ներկայացված է նաև հետազոտության անցկացման հիմնական խնդիրները և մտավոր հետամնաց նախադպրոցականների հասակակիցների նկատմամբ ցուցաբերած զգայության և փոխօգնության դրսևորումները (օգնել հասակակցին ինքնասպասարկման ժամանակ, նրանց փոխարեն կատարել գործողություններ՝ կոճակների կոճկում, ընկած իրի բարձրացում և այլն, ուշադրություն ցուցաբերել անբարենպաստ իրավիճակում գտնվող հասակակցին, հետաքրքրվել պատճառներով և այլն): Դիտման արդյունքները ցույց են տվել, որ մտավոր հետամնաց նախադպրոցականները դժվարությունների հանդիպելիս ոչ միայն հասակակցից օգնություն չեն խնդրում, այլ մերժում են: Դա նշանակում է, որ օգնություն ցույց տալու բարոյական իմաստը նրանց համար մնում է չբացահայտված և անհասանելի: Այս հանգամանքով է պայմանավորված մտավոր հետամնաց երեխաների

փոխօգնության և ապրումակցման կարողությունների ձևավորման միջոցների և մեթոդների մշակման և դրանք հիմնախնդիր դիտելու հարցը:

Վերոնշյալ հարցերի ուսումնասիրման համար մենք մշակել ենք տարբերակներ, որոնք բնութագրում են մտավոր հետամնաց նախադպրոցականների՝ իրենց տարեկիցների նկատմամբ ցուցաբերած զգայնության և փոխօգնության դրսևորումներն առօրյայում:

Հավաստող գիտափորձն անցկացվել է 2 ուղղությամբ.

1. ուսումնասիրել մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումները,

2. ուսումնասիրել երեխաների վարքի առանձնահատկությունները գործնական պայմաններում, որոնք պահանջում են ցուցաբերել օգնություն:

Բարոյական պատկերացումների հետազոտման համար կարևորել ենք հետևյալ խնդիրները.

1. բացահայտել մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումները և բովանդակությունը (կարեկցանքի և փոխօգնության դրսևորման դեպքում):

2. Բացահայտել բարոյական պատկերացումների և անբարենպաստ իրադրության և դրա ընկալման փոխհարաբերակցության աստիճանը:

3. Համեմատել ստացած տվյալները նախադպրոցական տարիքի բնականոն զարգացող երեխաների բարոյական պատկերացումների հետ և դրա հիման վրա բացահայտել մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումների առանձնահատկությունները:

Դրված խնդիրների լուծման համար մեր կողմից կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

- Վարքագծի ընտրություն՝ բարոյական նորմերի կիրառման կարողության տեսանկյունից

- նկարների բովանդակության բարոյական կողմերի բնութագրում

- պատմվածքի թաքնված բարոյական գաղափարի ընկալում

Տվյալ հետազոտության մեջ ընդգրկվել են 40 մտավոր հետամնաց նախադպրոցական: Հետազոտության արդյունքները վկայում են, որ ներկայացված նկարներում կամ պատմվածքներում, որտեղ առկա է անբարենպաստ իրավիճակը, մտավոր հետամնաց երեխաների մեծամասնությունը կամ հրաժարվել են պատասխանելուց, կամ տրված

պատասխանները չեն պարունակել օգնություն ցուցաբերելու դրսևորումներ: Միայն նախադպրոցականների 14,6%-ն է, որ նշել է օգնության կոնկրետ ուղիներ՝ «Մեծերը կօգնեն», «Երեխաները կօգնեն», «Մայրիկը կգա և կօգնի» և այլն:

Հավաստող գիտափորձի երկրորդ փուլն ուղղված էր մտավոր հետամնաց երեխաների իրական վարքի դրսևորմանն այնպիսի իրավիճակներում, որտեղ պահանջվում էր փոխօգնության ցուցաբերում: Հաստատվել է, որ 40 հետազոտվողից 33-ը (82,5%) կամ դրսևորել է պասիվ վարքագիծ, կամ պատասխանները և գործողությունները չի ուղղվել օգնություն ցուցաբերելուն՝ «Դաստիարակը կհավաքի», «Հետո կհավաքենք», «Թող ուրիշը հավաքի» և այլն:

Միայն երեխաներից 7-ն (17,5%) է նշել օգնության որոշակի տարբերակներ՝ «Կհավաքենք, նոր կգնանք խաղալու», «Կօգնենք հավաքելուն», «Մեղք է, կօգնենք նրան» և այլն:

Այսպիսով, հավաստող գիտափորձի արդյունքները հնարավորություն տվեցին կատարելու հետևյալ եզրահանգումները.

1. Ուսուցման և դաստիարակման գործընթացում մտավոր հետամնաց երեխաները ձեռք են բերում ճիշտ վարքագծի և օգնության ցուցաբերման տարրական բարոյական գիտելիքներ: Սակայն այդ գիտելիքները բնութագրվում են անբավարար գիտակցվածությամբ, աղքատիկությամբ, դրանց գործնական կիրառման անկարողությամբ:

2. Հիմնականում այդ երեխաների կողմից ցուցաբերվող օգնության մեջ բացակայում են գիտակցված դրդապատճառները և հասակակցին օգնություն ցուցաբերելու ցանկությունը՝ օգնություն է ցուցաբերում կամ մեծահասակի դրդմամբ, կամ իր անձնական շահերից ելնելով:

Ատենախոսության երրորդ՝ «Նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաների փոխօգնության և ապրումակցման ունակությունների դաստիարակման միջոցները և մեթոդները» գլխում, ներկայացված են մտավոր հետամնաց երեխաների՝ գեղագիտական ունակությունների ձևավորման մոտեցումները, բարոյական զգացումների զարգացումը և իրական վարքի հմտությունների ձևավորումը, օգնելու և ապրումակցելու դրսևորման կարողության խթանման հնարքները, ինչպես նաև հատուկ ստեղծված պայմաններում և իրական, գործնական իրավիճակներում փոխօգնության ցուցաբերման ձևավորման մանկավարժական գիտափորձի արդյունքները:

Զևավորող գիտափորձն անցկացվել է Գյումրու «Երեխաների տուն» մասնագիտացված մանկատանը: Այդ գիտափորձին մասնակցել է 35՝ 5-6

տարեկան մտավոր հետամնաց երեխա՝ 18-ը՝ փորձարարական խմբում, 17-ը՝ ստուգողական: Գիտափորձի ընթացքում կարեկցանքի և փոխօգնության կարողությունների զարգացմանն ուղղված դաստիարակչական աշխատանքները գիտափորձի ժամանակ անցկացվել են ընդհանուր զարգացնող պարապմունքների, խաղերի ժամանակ, օրվա մեջ և առօրյա շփման ընթացքում: Կիրառվել են ինչպես դիդակտիկ նյութեր (նկարներ, սլայդներ, մուլտֆիլմեր), այնպես էլ արդեն իրենց ծանոթ հեքիաթներ, պատմվածքներ, խաղեր և այլն: Մանկավարժական գիտափորձն ընդգրկում է 3 պայմանական փուլ:

Առաջին փուլի նպատակն էր փորձարարական խմբի երեխաների մեջ ձևավորել պատկերացումներ բարոյական չափորոշչի վերաբերյալ, ձևավորել դրական վերաբերմունք և ցանկություն նմանակման արժանի բարոյական չափորոշչի հանդեպ:

Երկրորդ փուլն ուղղված էր հետազոտվողների մեջ բարոյական զգացմունքների զարգացմանը: Այդ նպատակով կիրառվել են հեքիաթներ, պատմվածքներ, մուլտֆիլմեր, տիկնիկային ներկայացումներ, սյուժետային խաղեր, որոնք ուղղված էին այդ երեխաների մեջ տվյալ հերոսների նկատմամբ (որոնք օգնության կարիք ունեն) կարեկցանքի, փոխօգնության, զգացմունքների առաջացմանը:

Մեր աշխատանքի երրորդ փուլը նվիրված էր իրական և պայմանական իրավիճակներում մտավոր հետամնաց նախադպրոցականների մեջ ապրումնակցման և փոխօգնության կարողությունների ձևավորմանը: Այդ նպատակով ուսումնասիրվող խմբերի հետազոտվողների համար ստեղծվել են այնպիսի պայմաններ, որտեղ նրանք ստիպված էին կատարել վարքագծի ընտրություն:

Մանկավարժական գիտափորձի արդյունքները վկայում են, որ փորձարարական խմբի մտավոր հետամնաց երեխաները օգնության ցուցաբերման և կարեկցանքի արտահայտման ուսումնասիրվող ցուցանիշներում հասել են զգալի արդյունքների:

Այսպիսով՝ այն պայմանական իրավիճակներում ինչպիսին է. «Դու ի՞նչ կանեիր, եթե.....»»

- ունենալիք մեծ, կարմիր փուչիկ, իսկ ընկերդ՝ ոչ,
- երեխաներից մեկն ընկներ և թափեր խորանարդիկները,
- տղան բաժակը կոտրելու պատճառով լաց է լիներ:

Փորձարարական խմբի հետազոտվողների 75,9%-ի պատասխաններում ապրումնակցում էին օգնություն ցուցաբերելու որոշակի առաջարկներ՝ «Կտամ իմ փուչիկը», «Լաց մի՛ լինի»,


«Կիւղճայի», «Կասեի, որ իր վրա չջղայնանան»: Ստուգողական խմբում նման պատասխաններ է տվել միայն երեխաների 19,6%-ը: Այստեղ հետազոտվողների մեծամասնությունը հրաժարվել է պատասխանելուց (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Պայմանական իրավիճակներում օգնություն ցուցաբերելու և ապրումակցման տեսակի ընտրության ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքները

Փորձարկվողների պատասխանները	Ցուցանիշներ	Փորձարարական խումբ n=18				Ստուգողական խումբ n=17			
		Իրավիճակներ				Իրավիճակներ			
		1	2	3	Ընդ- հա- նուր	1	2	3	Ընդ- հա- նուր
Օգնություն ցուցաբերելու որոշակի միջոցներ պարունակող պատասխաններ	Բացարձակ	15	14	12	41	4	3	3	10
	%	83,3	77,8	66,7	75,9	23,5	17,6	17,6	19,6
Օգնություն ցուցաբերելու որոշակի միջոցներ չպարունակող պատասխաններ	Բացարձակ	3	3	4	10	7	8	5	20
	%	6,7	6,7	22,2	18,5	41,2	47,1	29,4	39,2
Հրաժարվում են օգնություն ցույց տալու առաջարկից	Բացարձակ	-	1	2	3	6	6	9	21
	%	-	5,5	11,1	5,6	35,3	35,3	52,9	41,2


Նմանատիպ արդյունքներ են ստացվել նաև սյուժետային նկարների վերլուծության ժամանակ, որտեղ պատկերված էին ապրումակցում և փոխօգնություն պահանջող իրավիճակներ: Կարևոր ենք համարում նշել, որ փորձարկվողների մեծամասնությունն (66,7%) անգամ բարդ իրավիճակներում առաջարկել էին օգնություն ցուցաբերելու հատուկ միջոցներ. «Կխղճայի», «Կհավաքեի բաժակի կտորները և կտայի իրեն», «Կասեի, որ եղածի համար չկշատմբեն», և այլն: Անհրաժեշտ է նշել, որ ստուգողական խմբի մտավոր հետամնաց երեխաների միայն երեքի (17,6%) պատասխաններն էին պարունակում օգնություն ցուցաբերելու որոշակի միջոցներ, այն դեպքում, երբ 82,3 % փորձարկվողների պատասխանները չէին պարունակում փոխադարձ օգնության մոտեցումներ (նկար 1):



1. Պատասխաններ օգնություն ցույց տալու որոշակի միջոցների առկայության վերաբերյալ

2. Պատասխաններ օգնություն ցույց տալու միջոցների բացակայության վերաբերյալ

Փորձարարական խումբ



3. Պատասխաններ օգնություն ցույց տալու միջոցներից հրաժարվելու վերաբերյալ

Ստուգողական խումբ

Նկար 1. «Ի՞նչ կանեիր դու, եթե տեսնեիր, որ երեխաներից մեկը բաժակը ձեռքից զցելու և կոտրելու պատճառով լաց է լինում» համձնարարության կատարման համեմատական ցուցանիշներ

Ձևավորող մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունը վկայում է, որ հետազոտվող երկու խմբերի փորձարկվողներն էլ համեմատաբար հեշտությամբ էին կարողանում հաղթահարել իրենց հասակակիցներին օգնություն ցուցաբերելու առաջին երկու համձնարարությունները («Ի՞նչ կանեիր դու, եթե ունենայիր մեծ գեղեցիկ փուչիկ, իսկ կողքիդ մյուս տղան կամ աղջիկը՝ չունենար», «Ի՞նչ կանեիր դու, եթե տեսնեիր, որ երեխաներից ինչ-որ մեկը ընկել է և թափել է խորանարդիկները»):

Այստեղ փորձարարական խմբի փորձարկվողների ճնշող մեծամասնության պատասխաններում պարունակում էին օգնություն

ցուցաբերելու որոշակի միջոցներ. առաջին իրավիճակում՝ 83,3% և երկրորդ իրավիճակում՝ 77,8%: Ստուգողական խմբում այդ արդյունքները զգալիորեն ցածր էին:

Կարևորում ենք պարզաբանել, թե ցուցադրված նկարներում պատկերված իրավիճակներում օգնության ինչպիսի միջոցներ էին առաջարկում փորձարկվողները: Անցկացված ձևավորող մանկավարժական գիտափորձի վերջում փորձարարական և ստուգողական խմբերի մտավոր հետամնաց երեխաների պատասխանների վերլուծությունը, ցույց տվեց, որ կային պատասխաններ, որոնցում չէին ներկայացվում օգնություն ցուցաբերելու որոշակի ուղիներ, իսկ որոշ պատասխաններում, պարունակվում էին անբարենպաստ իրավիճակների լուծման միջոցներ: Այդ օգնությունը պետք է ցուցաբերվի կամ մեծերի, կամ հասակակիցների կողմից (աղյուսակ 11): Աղյուսակից երևում է, որ փորձարարական խմբի միայն 7 փորձարկվողների (7,4%) կողմից չեն նշվում օգնություն ցուցաբերելու միջոցներ, իսկ երեխաների 79,6%-ը նշել է տարեկիցներին և 13%-ը՝ մեծերին, որոնք կօգնեն իրենց ընկերներին նկարներում պատկերված անբարենպաստ իրավիճակը կարգավորելու հարցում:

Ստուգողական խմբում, որտեղ պատասխանները չէին պարունակում օգնություն ցուցաբերելու առաջարկություն, կազմում էին 58,8%: Այդ խմբի մտավոր հետամնաց երեխաները շատ դեպքերում չեն կարողացել իրավիճակից ելքեր գտնել: Նրանք կամ չեն տվել, թե «Ի՞նչ եղավ հետո» հարցի պատասխանը, կամ ուղղակի պատասխանել են՝ «Չգիտեմ»:

Մտավոր հետամնաց երեխաների մեջ օգնության և կարեկցանքի ձևավորման հետաքրքիր արդյունքներ են ստացվել նաև իրական և գործնական իրավիճակներում:

Այսպես, «խաղալիքներ» իրավիճակում պետք է երեխան ընտրեր հետևյալ տարբերակները՝

- թողնել հերթապահին՝ հավաքել իրերը, իսկ մենք գնանք ընտրենք բերված խաղալիքները,
- օգնել հերթապահին՝ հավաքելու խաղալիքները և հետո միասին գնանք բերելու խաղալիքները:

Հաջորդ իրավիճակը «Ծնողներն» են: Այստեղ ևս կա ընտրելու 2 տարբերակ.

- օգնել ընկերոջը՝ կատարելու հանձնարարությունը, որպեսզի նա գնա իրեն այցելած ծնողի մոտ,

- թող կատարի տրված հանձնարարությունը, հետո միայն գնա ծնողի մոտ:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ փորձարարական խմբի մտավոր հետամնաց երեխաները մանկավարժական գիտափորձի վերջում ավելի լավ էին կողմնորոշվել օգնություն ցուցաբերելու հարցում, քան ստուգողական խմբի երեխաները:

Այսպես՝ եթե մինչ գիտափորձը 2 խմբի հետազոտվողները օգնություն ցուցաբերելու հարցում պասիվ էին, և նրանց տված պատասխանները ուղղված չէին օգնություն ցուցաբերելուն, ապա մանկավարժական գիտափորձի վերջում փորձարարական խմբի երեխաների 72,2%-ը առաջարկում էին օգնել ընկերոջը: Այն դեպքում, երբ ստուգողական խմբում այսպիսի երեխաներն ընդամենը 3-ն էին (17,7%): Նմանատիպ արդյունքներ են ստացվել նաև «Խաղալիքներ» փորձարարական իրավիճակում:

Փորձարարական աշխատանքների արդյունքները վկայում են, որ ստուգողական հանձնարարությունների պայմանները փորձարկվողներին դրեցին երկու ընտրության առջև.

- դրական (ընկերոջը օգնություն ցույց տալ)
- բացասական (հրաժարվում են օգնությունից և բավարարում անձնական հետաքրքրությունները՝ այս դեպքում բաժնի խաղալիք):

Ինչպես պարզվեց ուսումնասիրվող երկու խմբերի փորձարկվողները մի դեպքում օգնություն ցույց տվեցին ինքնուրույն՝ առանց ուրիշների ցուցումների, մյուսում՝ մեր անմիջական կամ անուղղակի առաջարկությամբ: Եղան նաև այնպիսի երեխաներ, որոնք չկարողացան ընտրել որևէ վարքագիծ (աղյուսակ 2):

Փորձարկվողների վարքագծի ձևերի ընտրությունը անհատական փորձարարական իրավիճակներում՝ մանկավարժական գիտափորձի տարբեր փուլերում

Չետագոտվող խմբերը	Ուսումնասիրության փուլերը	Ընտրեցին որոշակի վարքագիծ										Վարքագծի ընտրության բացակայություն	
		Դրական								Բացասական			
		Ինքնուրույն	Առաջարկությամբ		Ցուցումով								
					Ուղղակի		Անուղղակի						
		Բաց	%	Բաց	%	Բաց	%	Բաց	%	Բաց	%	Բաց	%
Փորձարարական խումբ n=18	Մինչ գիտափորձը	1	5,6	-	-	3	16,7	-	-	10	55,5	4	22,2
	Գիտափորձից հետո	12	66,6	3	16,7	-	-	2	11,1	-	-	1	5,6
Ստուգողական խումբ n=17	Մինչ գիտափորձը	1	5,9	-	-	1	5,9	-	-	10	58,8	5	29,4
	Գիտափորձից հետո	2	11,8	-	-	5	29,4	-	-	7	41,2	3	17,6
Ընդամենը n=35	Մինչ գիտափորձը	2	5,7	-	-	4	11,4	-	-	20	57,1	9	25,7
	Գիտափորձից հետո	14	40	3	8,6	5	14,3	2	5,7	7	20	4	11,4

Աղյուսակից պարզ երևում է, որ երկու ուսումնասիրվող խմբերից մինչ գիտափորձը 35 հետազոտվողներից 9-ը (25,7%) չկարողացան ընտրել վարքագծի որևէ ձև, 57,1% -ը ընտրեց բացասական վարքագիծ, այսինքն՝ հրաժարվեց ընկերոջն օգնելուց և զնացին խաղալու, 11,4 %-ը օգնություն ցուցաբերեց միայն ցուցումից հետո և միայն 2 %-ը (5,7%) ինքնուրույն կերպով որոշեց օգնել ընկերոջը համձնարարությունը կատարելու:

Համապատասխան մանկավարժական աշխատանքի իրականացումից հետո ուսումնասիրվող խմբերում այդ պատկերը կտրուկ փոխվել է: Ձգալի չափով փոխվել է բացասական վարքագիծ ընտրող կամ ընտրության մեջ չկողմնորոշվող երեխաների քանակը, սակայն ավելացել է այն դեպքերի թիվը, երբ մտավոր հետամնաց երեխաներն իրենք էին որոշում կայացում ընկերոջն օգնելու համար: Այս ամենն ավելի շատ ի հայտ է եկել փորձարարական խմբի հետազոտվողների մեջ:

Այսպիսով, ձևավորող մանկավարժական գիտափորձի արդյունքները թույլ են տալիս նշել, որ առաջարկվող միջոցները, մեթոդները, հատուկ ստեղծված պայմանական և իրական գործնական իրավիճակներն ունեն մեծ նշանակություն մտավոր հետամնաց երեխաների մեջ կարեկցման արտահայտման և հասակակիցներին օգնություն ցուցաբերելու զարգացման գործում:

Այս ամենը վկայում է մեր կողմից առաջարկված մանկավարժական մոտեցումների կիրառման արդյունավետության մասին:

Ատենախոսության մեջ բերված արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ **եզրակացությունները**.

1. Հետազոտվող հիմնախնդիրն արդիական է, ունի տեսական, գործնական, սոցիալական կարևոր նշանակություն, քանի որ մտավոր հետամնաց երեխաների փոխօգնության ունակությունների ձևավորման և զարգացման հիմնախնդիրը անմիջականորեն կապված է նրանց դաստիարակության ընդհանուր դրվածքի, հասարակության մեջ ներգրավվելու, դպրոցական ուսուցմանը նախապատրաստելու հարցերի հետ: Սակայն վերջինիս անբավարար մշակվածությունը խոչընդոտում է մի շարք դաստիարակչական խնդիրների լուծման աշխատանքներին, մտավոր հետամնաց նախադպրոցականների շրջանում բարեսրտություն, փոխօգնություն ցուցաբերելու ունակությունների և կարողությունների ձևավորմանը: Սույն հանգամանքը փաստում է տվյալ խնդրի մշակման, նրա կատարելագործման համար մեթոդների ու միջոցների որոնման անհրաժեշտությունը:

2. Շրջապատի հետ ճիշտ փոխհարաբերությունների ստեղծման ժամանակ մտավոր հետամնաց նախադպրոցականների բազմաթիվ դժվարությունները պայմանավորված են ոչ միայն մտավոր զարգացման առանձնահատկություններով, այլև բարոյական նորմերի անբավարար գիտակցմամբ, ինքնուրույնության և առարկայագործնական գործունեության փորձի բացակայությամբ:

3. Նախադպրոցական տարիքի մտավոր հետամնաց երեխաները լիարժեք չեն տիրապետում միմյանց օգնելու կարողություններին և ունակություններին շփման և գործնական իրավիճակներում, ի վիճակի չեն ընտրելու ճիշտ և համապատասխան վարքագիծ: Նրանցից 63%-ը կամ հրաժարվել է հասակակցին օգնություն ցույց տալու առաջարկից, կամ նրանց պատասխանները և պրակտիկ գործողությունները զուրկ են եղել օգնություն ցուցաբերելու որոշակի միջոցներից: Մտավոր հետամնաց նախադպրոցականներից 37,6%-ը ընկերոջը օգնելու նպատակով հասակակիցներին ուղղորդել է դեպի դաստիարակը, երեխաների 35%-ի մոտ ցուցաբերած օգնությունը նյութական արտահայտություն է ունեցել (տալ խաղալիքը, մատիտը և այլն), հետազոտվողների միայն 3,3% և 5,0%-ն է, հասակակցին օգնել որոշակի գործնական քայլով կամ բարոյական աջակցությամբ: Փորձարկվողներից 82%-ը ցուցաբերել է պասիվ վարք և անտարբերություն:

4. Մտավոր հետամնաց նախադպրոցականների փոխօգնության և բարեսրտության կարողությունների և ունակությունների ձևավորման հիմնական ուղիների բացահայտման արդյունքում դրականորեն գնահատվեցին հետազոտության առջև դրված խնդիրների լուծման համար ընտրված մոտեցումները և դրանց ուղղվածությունը, դրանք են՝

- էթիկական չափանմուշի ձևավորմանը և բարոյական գզացմունքների զարգացումը
- բարեսրտության դրսևորման և օգնություն ցուցաբերելու պահանջմունքների խթանումը,
- օգնություն ցուցաբերելու և բարեսրտության դրսևորման նպատակով ճիշտ վարքագծի ձևավորումը պայմանական իրավիճակներում
- իրական և գործնական իրավիճակներում բարեսրտության և օգնություն ցուցաբերելու ունակության ձևավորումը:

5. Այս խնդիրների լուծման համար մշակվել են հետևյալ միջոցները, մեթոդները և դրանց կիրառման պայմանները.

- օգնություն ցույց տալու, բարեսրտության դրսևորման արարքների բնույթի և դրդապատճառների բացատրություն,
- օգնություն ցուցաբերող երեխայի անձի և «բարի օգնական» կերպարի հետ համեմատություն,
- բարոյական իրավիճակների առանձնացում և գնահատում,

- անբարենպաստ իրավիճակներից դուրս գալու ուղիների ընտրություն, խաղային ձևերի լայն կիրառում՝ երեխային դնելով «բարի օգնական»-ի դերում,

- տարբեր իրավիճակների ձևավորում, որոնք պահանջում են բարեսրտության դրսևորում, օգնության ցուցաբերում:

6. Մեր կողմից առաջարկվող մանկավարժական մոտեցումների կիրառումը մանկավարժական ուսուցանող գիտափորձում ընդհանուր առմամբ թույլ տվեց նշանակալիորեն բարձրացնել մտավոր հետամնաց նախադպրոցականների մոտ օգնություն ցույց տալու և բարեսրտություն դրսևորելու ունակությունների և կարողությունների զարգացման մակարդակը: Դրա արդյունքում՝

- հետազոտվողների 92,6%-ը սովորեց ինքնուրույն առանձնացնել նկարներում պատկերված անբարենպաստ իրավիճակները, երեխաների 74,3%-ը կարողացավ փոխանցել կերպարի զգացմունքային վիճակը,

- մտավոր հետամնաց երեխաների 75,9%-ի պատասխաններն ընդգրկում էին դժվար կացության մեջ հայտնված իրենց հասակակիցներին օգնություն ցույց տալու կոնկրետ միջոցներ,

- մանկավարժական գիտափորձի ավարտին հետազոտվողների 77,8%-ը սովորեց գործնական օգնություն ցույց տալ հասակակցին վառ արտահայտված իրավիճակում, իսկ 66,7%-ը՝ հոգեկան ապրումների պահին,

- հետազոտվողների 72,2%-ը սովորեց ընտրել ճիշտ վարքագիծ, օգնելու ցանկություն հայտնել դժվար կացության մեջ հայտնված հասակակցին:

7. Մեր դիտումները վկայում են, որ բարեսրտության և փոխօգնության դրսևորման նպատակով անցկացված շտկողազարգացնող գործունեությունը որոշակի գործնական աշխատանքներում դրական ազդեցություն ունեցավ նաև մտավոր հետամնաց երեխաների հաղորդակցման, բառապաշարի և խոսքի զարգացման վրա, ինչը նույնպես կարևոր ուղղություններից է այդ երեխաներին դպրոցական ուսուցմանը նախապատրաստելու և հասարակության մեջ ներգրավելու գործում:

8. Անցկացված հետազոտությունների արդյունքները վկայում են մտավոր հետամնաց երեխաների բարեսրտության դրսևորման և նրանց փոխօգնություն ցույց տալու ունակությունների և կարողությունների զարգացման համար առաջարկված մանկավարժական մոտեցումների արդյունավետության մասին:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ աշխատանքներում.

1. Յայլոյան Ա.Վ. Изучение нравственных представлений умственно остальых дошкольников на основе описания ими картинок этического содержания «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական ժողովածու Եր. 2003, էջ 66-69

2. Յայլոյան Ա.Վ. Փոխօգնության և կարեկցողության ձևավորումը մտավոր հետամնաց նախադպրոցականների մոտ «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական ժողովածու Եր. 2006, N5 էջ 13-17

3. Յայլոյան Ա.Վ. Սահմանափակ կարողություններով նախադպրոցականների մեջ փոխօգնության որակների դաստիարակման ուղղությամբ, դաստիարակների իրազեկության մակարդակը /Սոցիոլոգիական հետազոտություն/ «Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն» գիտամեթոդական հոլածների ժողովածու Եր. 2007, N6 էջ 15-17

4. Յայլոյան Ա.Վ. Մտավոր հետամնաց նախադպրոցականների կարեկցանք և փոխօգնություն ցուցաբերելու ձևավորումը ռեալ գործնական իրավիճակներում «Մանկավարժական միտք» Եր. «Ձանգակ-97», 2011, էջ 255-262

5. Յայլոյան Ա. Վ. Формирование отзывчивости и навыков оказания помощи в коллективных экспериментальных ситуациях у умственно остальых дошкольников. «Մանկավարժական միտք», Երևան, «Ձանգակ -97», 2011թ., էջ 219-222

6. Յայլոյան Ա. Վ. Մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական զգացումների զարգացումը և իրական վարքի հմտությունների ձևավորումը «Կրթությունը և գիտությունը Արցախում» ԼՂՀ ք. Ստեփանակերտ «Ասողիկ» ՄՊԸ տպարան, հուլիս-դեկտեմբեր, 2012 (3-4), էջ 47-51

7. Յայլոյան Ա. Վ. Գործնական իրավիճակներում մտավոր հետամնաց նախադպրոցականների բարոյական պատկերացումների առանձնահատկությունները «Գիտական տեղեկագիր», Երևան, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Մանկավարժ» հրատարակչություն, 2013, էջ 43-51:

Яйлоян Анна Владимировна

Средства и методы формирования взаимопомощи у умственно отсталых дошкольников

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.03- „Специальная педагогика”

Защита состоится 13-го марта 2014г. в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 020 ВАК „Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 375010, Ереван, ул. Тигран Меца 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Проблема совершенствования процесса нравственного воспитания подрастающего поколения всегда была и остается актуальной. В теории и практике специального обучения и воспитания поиск путей и средств формирования морального облика детей с интеллектуальной недостаточностью развития связан с определенными трудностями, обусловленными психофизическими особенностями развития. Поэтому многие аспекты этой проблемы оставались недостаточно изученными и разработанными. В частности, проблема нравственного воспитания умственно отсталых дошкольников в аспекте формирования у них отзывчивости и взаимопомощи не была предметом специального экспериментального исследования.

Поэтому изучение особенностей развития взаимопомощи у умственно отсталых дошкольников, разработка средств, методов и условий ее формирования на основе совершенствования содержания дидактических заданий, упражнений, игр и создания специальных условий их проведения будет способствовать активизации их деятельности, развитию умений и навыков оказания взаимной помощи друг другу. Решение этих вопросов будет способствовать формированию у умственно отсталых детей правильных взаимоотношений и с окружающими, воспитанию положительных черт характера, что станет основой их успешной интеграции в общество. Это и определяет проблему исследования как весьма актуальную, имеющую теоретическую, практическую и социальную значимость.

Цель исследования. Изучить особенности развития взаимопомощи у умственно отсталых детей старшего дошкольного возраста и разработать средства и методы ее совершенствования.

Задачи исследования.

1. Изучить современные подходы к воспитанию взаимопомощи у умственно отсталых дошкольников.

2. Изучить особенности развития взаимопомощи у умственно отсталых детей старшего дошкольного возраста.

3. Разработать специальные упражнения, задания, игры и определить ситуации для воспитания взаимопомощи у умственно отсталых детей старшего дошкольного возраста и экспериментально обосновать их эффективность.

Научная новизна исследования состоит:

- в выявлении и анализе постановки работы в специализированном детском доме и интегративном детском саду по воспитанию взаимопомощи у умственно отсталых детей старшего дошкольного возраста;
- в отборе, разработке и систематизации средств, методов и педагогических подходов для развития взаимопомощи у умственно отсталых дошкольников;
- в создании педагогических приемов, условий и реальных практических ситуаций, способствующих проявлению взаимопомощи у умственно отсталых дошкольников.

Теоретическая значимость исследования заключается в теоретическом обосновании возможности и целесообразности применения рекомендованных подходов для воспитания отзывчивости и взаимопомощи у умственно отсталых детей старшего дошкольного возраста, а также в анализе, теоретическом обосновании и обобщении полученных результатов исследования.

Практическая значимость исследования состоит в экспериментальной разработке и практическом внедрении специальных средств, методов и педагогических подходов для воспитания отзывчивости и взаимопомощи у умственно отсталых детей старшего дошкольного возраста, что станет основой формирования у этих детей нравственных представлений и поступков.

Апробация результатов исследования. Основные положения, результаты и выводы диссертации докладывались и обсуждались на научных конференциях и заседаниях кафедры специальной педагогики и психологии Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна (2005-2011гг), кафедры педагогики Гюмрийского государственного педагогического института им. М. Налбандяна (2004-2011гг). По теме диссертации опубликовано 7 статей.

Структура и объем диссертации. Диссертационная работа изложена на 163 страницах компьютерного текста и состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 13 таблиц, 13 рисунков и 8 приложений.

Anna Vladimir Yayloyan
Means and Methods of Forming of Mutual Assistance of Preschool
Children with Mental
Retardation

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.03 <<Special Pedagogy>>. The thesis defense will take place on March 13, 2014, at 14:00 at the meeting of the specialized pedagogical committee “Pedagogy” 020 HAC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan (address: 17 Tigran Mets street, 375010 Yerevan, Armenia).

SUMMARY

The relevance of the research. The problem of improving the moral education of the young generation has always been and remains relevant. In theory and practice of special education and training the finding of the ways and means of shaping the moral character of children with intellectual deficiency is associated with the development of certain difficulties caused by mental and physical characteristics and the number of unique features in their moral development. That is why many aspects of this issue remain not enough investigated and developed. In particular, the problem of moral education and training of mentally retarded preschoolers in the aspect of shaping their responsiveness and mutual assistance has not been the subject of a special pilot study.

So the study of the peculiarities of the forms of mutual assistance in preschool children with developmental intellectual impairments, development of tools, methods and conditions of its formation in this group of children on the basis of improving the content of teaching assignments, exercises, games and creating special conditions for their implementation will contribute to the revitalization of their activities, development of skills and abilities for providing mutual help to each other. Solution of these issues will contribute to formulation of right relationship with others within children with mental retardation and, to the training of positive character traits that will underpin their successful integration into society. All this is identifying the problem as very relevant, having theoretical and social value.

The aim of the research is to investigate peculiarities of development of mutual assistance of senior preschool age mentally retarded children and developing means and methods of its improvement.

The objectives of the research are as follows:

1. to explore modern approaches of preschool age mentally retarded children in the area of mutual assistance training;
2. to explore the peculiarities of mutual assistance development of senior preschool age mentally retarded children;

3. to develop special exercises, assignments, games and situations for training of mutual assistance development of senior preschool age mentally retarded children and justify the expansion of their effectiveness through experiments.

The scientific novelty of the research is to study the moral ideas and the actual behavior of mentally retarded preschool children on the material manifestations of responsiveness and mutual assistance, the development of specific tools, techniques and pedagogical conditions of their education, as well as in the experimental justification of the effectiveness of their practical application.

The theoretical value of the research is determined by the theoretical justification for the feasibility and advisability of recommended approaches application for education of responsiveness and mutual assistance of senior preschool age mentally retarded children, as well as in the analysis and the theoretical justification and the conclusion of research results.

The practical significance of the research is to pilot the development and practical implementation of special tools, methods and pedagogical conditions of responsiveness and mutual assistance education of mentally retarded children of senior preschool age, which will be the basis for the formation of moral ideas and actions for these children.

Approbation results of the study.

Basic positions, results and conclusions of the dissertation were reported and discussed at scientific conferences and meetings of the Faculty of Special Pedagogy and Psychology of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (2005-2011), the Department of Pedagogy of Gyumri Pedagogical Institute after M. Nalbandyan (2004-2011). Seven articles were published on the theme of dissertation.

The structure and volume of the dissertation. The thesis consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and appendices. The volume of work is 163 pages. The text of the thesis contents 13 tables, 13 pictures and 8 appendices.

A handwritten signature in black ink, appearing to be 'Z. Khachatryan', is written in a cursive style.